

Հաստատում եմ՝

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր,

տեխն.գ.դ., պրոֆեսոր

Ռ.Ռ. Սահակյան

2023թ.



## ԿԱՐԾԻՔ

### ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Աննա Սամվելի Հակոբյանի «Ինժեներական մտածողության ձևավորման առանձնահատկությունները հիմնական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում» խորագրով ԺԳ. 00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (Ընդհանուր տեխնիկական առարկաների դասավանդման մեթոդիկա)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Աննա Սամվելի Հակոբյանի «Ինժեներական մտածողության ձևավորման առանձնահատկությունները հիմնական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության», «Քիմիա և կենսաբանություն», «Արվեստի և սպորտի» ամբիոնների համատեղ նիստում (Արձ. թիվ 8, կայացած՝ 17.11.2023թ.):

Մասնակցում էին «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի մ.գ.դ. պրոֆեսոր Պ. Գևորգյանը, մ.գ.թ. դոցենտներ Լ. Բաղդասարյանը, Ս. Բեժանյանը, Լ. Հարոյանը, Ա. Հարությունյանը, ասիստենտներ՝ մ.գ.թ. Ն. Ներկարարյանը, Լ.

Մարուքյանը, հ. գ. թ. դոցենտներ՝ Ն. Կոստանդյանը, Վ. Միրզոյանը, Մ. Մազմանյանը, դասախոսներ՝ Ն. Հովսեփյանը, Տ. Մալումյանը:

«Արվեստի և սպորտի ամբիոնի մ.գ.թ., դոցենտ Ա. Բարսեղյանը, տեխն.գ.թ., դոցենտ Մ. Վիրաբյանը, դոցենտներ Հ. Սարգսյանը, Զ. Էվոյանը, Հ. Չատինյանը, ասիստենտ Ս. Բարսեղյանը:

«Քիմիայի և կենսաբանության» ամբիոնի կ.գ.դ., պրոֆեսոր Զ. Վարդանյանը, ք.գ.թ, դոցենտներ Ա. Ղազարյանը, Է. Խաչատրյանը, կ.գ.թ., դոցենտներ Մ. Կիրակոսյանը, Գ. Սահակյանը, Հ. Գրիգորյանը, Ա. Հարությունյանը, ֆ.մ.գ.թ, դոցենտ Մ. Թովմասյանը:

Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ապագա մասնագետի ինժեներական մտածողության հիմքերը դրվում են հանրակրթական դպրոցում բնագիտական առարկաների դասավանդման՝ մասնավորապես «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման գործընթացում:

Հեղինակը գիտամանկավարժական, մեթոդական գրականության համակողմանի ուսումնասիրության արդյունքում հստակեցրել և նորովի է սահմանել «ինժեներական մտածողություն» հասկացությունը և մշակել է միջին դպրոցում սովորողների ինժեներական մտածողության ձևավորվածության մակարդակները և դրանք որոշող չափանիշները: Մշակվել է «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում դպրոցականների ինժեներական մտածողության ձևավորումն ապահովող մեթոդական համակարգ, որը ներառում է մեթոդաբանական հիմքերը, առանձնահատկությունները, ուսուցման նպատակները, խնդիրները, մանկավարժական պայմանները, տեխնոլոգիաները, մեթոդներն ու միջոցները, ուսուցչի մասնագիտական կարողունակությունները և ակնկալվող վերջնարդյունքը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Այն ներառում է 15 աղյուսակ, 4 տրամագիր, 6 նկար, 5 գծապատկեր: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային 164 էջ:

Ատենախոսության առաջին գլխում Աննա Հակոբյանը հոգեբանամանկավարժական հետազոտությունների դիտարկման արդյունքում պարզաբանել է ինժեներական մտածողության ձևավորման տեսական հիմքերը:

Մտածողությունը ընդունելով որպես ճանաչողական գործընթաց՝ ներկայացվել է մտածողության տեսակները և նրանց առանձնահատկությունները: Հանգամանորեն ներկայացվել է ինժեներական մտածողության էությունը, առանձնահատկությունները և զարգացման մակարդակները:

Վերլուծելով «ինժեներական մտածողություն» հասկացության վերաբերյալ գոյություն ունեցող սահմանումները՝ առաջ է քաշվել այն տեսակետը, որ ինժեներական մտածողությունը համընդհանուր հասկացություն է և ձևավորվում է տեխնիկական ու ստեղծագործական խնդիրների լուծման գործընթացում:

Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակը, ներկայացնելով դասավանդման հին և նոր մեթոդների բազմազանությունը, հանգել է այն եզրակացության, որ «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդումը պետք է իրականացնել ավանդական և ժամանակակից մեթոդների համադրությամբ՝ հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները և նրանց պատրաստվածության մակարդակը:

Միաժամանակ կարևորվել է բնագիտական առարկաների և «Տեխնոլոգիա» առարկայի միջև գոյություն ունեցող միջառարկայական կապերը, որոնք թույլ են տալիս գիտելիքների փոխանցման միջոցով հիմք ստեղծել նոր գաղափարների համար և զարգացնել ինժեներական մտածողությունը:

Հիմնավորվել է, որ «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման ժամանակ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառումը մեծապես նպաստում է ինժեներական մտածողության ձևավորմանը:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված է ինժեներական մտածողության ձևավորմանը նպաստող մշակված մեթոդական համակարգի փորձարարական հետազոտության ընթացքը և արդյունքների վերլուծությունը:

Մտացված հետազոտական և փորձարարական նյութերի արդյունքները վկայում են առաջ քաշված վարկածի հավաստիությունը:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը, արտացոլում է նրա հիմնական դրույթները:

Ատենախոսն ունի 11 գիտական հոդված:

Վերլուծելով Աննա Հակոբյանի ատենախոսական աշխատանքը՝ հարկ ենք համարում նշել հետազոտության արժեքավոր կողմերը.

- հեղինակի կողմից կատարվել է հիմնահարցի տեսական հիմքերի բազմակողմանի վերլուծություն,

- սահմանվել է ինժեներական մտածողության ձևավորվածության ցածր, միջին և բարձր մակարդակները, մշակվել են դրանք որոշող չափանիշները,

- տրվել է «ինժեներական մտածողություն» հասկացության նոր սահմանումը,

- մշակվել է ինժեներական մտածողության ձևավորման մեթոդական համակարգ,

- իրականացվել է մեթոդիկայի արդյունավետությունը հիմնավորող գիտափորձ:

Արժևորելով աստենախոսի կողմից կատարած գիտական աշխատանքը՝ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում.

1. Ցանկալի կլիներ ավելի մեծ աշխարհագրություն ունենար մանկավարժական գիտափորձում ընդգրկված դպրոցների ցանկը, որի արդյունքում կշահեր աստենախոսության արժեքը:
2. Աշխատանքի վերջում ներկայացված հավելված 2-ում առկա են դժվար հարցեր 5-7-րդ դասարանների սովորողների համար (թիվ 24, 25, 27):
3. Պաշտպանության ներկայացվող դրույթներից 3-րդը հստակեցված չէ:
4. Եզրակացությունները պետք է լինեն պնդումներ. վերաձևակերպման կարիք ունի 2-րդ եզրակացությունը:
5. Աշխատանքում առկա են նաև տպագրական վրիպակներ:

## Եզրակացություն


Հետազոտության թեմայի արդիականությունը, նրա գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Աննա Սամվելի Հակոբյանի «Ինժեներական մտածողության ձևավորման առանձնահատկությունները հիմնական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացում» թեմայով աստենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, ունի կարևոր տեսական և գիտական նշանակություն, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի

7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (Ընդհանուր տեխնիկական առարկաների դասավանդման մեթոդիկա)» մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է հայցվող մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Մանկավարժության և հոգեբանության

ամբիոնի վարիչ /  մ.գ.թ., դոցենտ Լ.Գ. Բադղասարյան

Քիմիայի և կենսաբանության

ամբիոնի վարիչ /  մ.գ.թ., դոցենտ Ա.Հ. Ղազարյան

Արվեստի և սպորտի

ամբիոնի վարիչ /  մ.գ.թ., դոցենտ Ա.Ա. Բարսեղյան

Լ. Բադղասարյանի, Ա. Ղազարյանի և Ա. Բարսեղյանի ստորագրությունները հաստատում եմ

ՎՊՀ-ի ժամբարտուղի

մ. գ. թ., դոցենտ  Ա.Ա. Բեժանյան

